

յիններու : Եւ այս առթիւ , հարիւրաւոր ներկայներու հետաքրքրական բաժնէն հետաւոր ազգայիններուն ալ մաս հանելու համար էր որ ամփոփեցինք զայն այս էջերու մէջ որքան հնար էր համառօտել : Ամբողջ 4 ժամ տեւեց ներկայացումը , 4 արարուածներով և 8 տեսարաններով : Դերասանները որոց յաջողակութեան նաեւ կը պարտինք ներկայացման զեղեցիկութիւնը , կարծէք մի առ մի քննադատել հրապարակաւ : Արիկ աղան — Տիար Ս. Ալիբուրնարեան — աւելի յաջող էր հերոսապետի դերին մէջ որ յատուկ էր իր երիտասարդական կորովին : Եսթեր , Արիկ աղայի կինը — Տիկին Դիմաքսեան — մայրական սիրոյ տկար արտայայտութիւն մ'ունէր : Գեղամ , Արիկի մեծ որդին , — Կ. Պէրպէրեան — աւելի եռանդալից կրնար արտասանել : Գոհար , Արիկի մեծ աղջիկը — Օր. Ա. Գարակէօզեան — բոլոր մասերուն մէջ զերազանց յաջողութիւն ունեցաւ բացի բանտարկեալին դերերէն , ուր կը պակսէին ոգեվառ և խանդալից շնչտեք իր խօսքերուն : Արամ , Գոհարի նշանածը , — Պրն. Ա. մատուցի — հակառակ Պոլսեցւոյ համարձակութեան , պաշարիւն էր որպէս սիրահար , զոր պարտ էր խանդավառ շարժումներով արօտայտել : Կուրի , հայ կին առեւանգուած քիւրա պէյէն , — Օր. Էլիզապէթ Եղիանեան — թէեւ յաջողեցաւ բայց անզոր ձայնով , որ շատ անգամ անխելի մնաց : Փոքրիկն Գեղամ — Լ. Առուսեան — կերեւի գիտէր որ դեր էր կատարածը և համեօտ լուծութիւն մը կը պահէր : Մկր , Արիկի տան ծառան Ծատախցի , — Տ. Մինասեան — գրէթէ անճանաչ էր իւր արտասանութիւններուն և զգեստաւորութիւն մէջ Տիգրանակերտցի ինչիւր . միայն հոգեւարքի վարկեմանին պէտք էր աւելի նուազած ձայնով յայտնութիւններն ընել : Ետերիք պէյ , չէյլս Լէն . լաւ էին իրենց ձեւին մէջ , բայց դատապարտութեան պահուն ժպտադէմ ինչիւր ներշնչելու ինչպէս և յարձակմանը ոչ գոռում գոչում ունենալին և ոչ սալավաթ կանչելին : Յեղափոխականաց խումբը ընդհանուր առմամբ լաւ էր . բացի հրահատէն — սուրհանդակ օգաչու — որ օրինակելի կերպով յաջող գտնուեցաւ բժիշկի դերին մէջ , Արիկի փոքր տղան Աշտուր — Լ. Զավալաթեան :

Վարագորներու անկանոն ելեւէջը , նուագածուաց անյարմար եղանակներ ածելը , ինչպէս « կոտորածի » և « բանտի » արարուածներէն ետք Two-Steps ջալելը փոխան տխուր և զանակներու և « վրէժխնդրութիւնը » ինչ Valtz փոխան հայկական եղանակներու , որոց նօթաները պատրաստ ունէին , և կամ նոյն է ամբրիկեան My Countryն ջալելու . երեսնաներու ընդհայ , ընդհան , ինչպէս նաեւ անախորժ աղմուկը քովի սենեկէն , զերասաններու և ոչ-դերասաններու դէմքերու երբեմնակի և րեւուած բնմին անկիւններէն նոյն իսկ արարուածներու ժամանակ , և արձակուած աւելորդ լոյսերը քովի օր.

րահէն ոչ սակաւ արգելք եղան դերի ազգած տպաւորութեան : Որքան ալ խստապահանջ ըլլանք , պէտք է դարձեալ ներողամտութեամբ վարուինք քանի որ ընկերութիւնը սկսնակ մ'է այս ձեռնարկին մէջ . և մանաւանդ դերակատարներու մեծամասնութիւնը նիւ Եորքցի լինելով , ամեն զոհողութիւն յանձն առնելէ ետք սխալներ կը սպրդին : Երեկոյթը տեւեց մինչև լոյս . ժողովուրդը ուրախ ժամանց մ'ունեցաւ . թէեւ « Ետերիք » կատակերգութիւնը ներկայացումէն վերջ՝ բաւական ծիծաղեցուցած էր արդէն , որը մեզ համար՝ աւելորդ էր քանի որ ներկայացումը իր տեսակին մէջ արդէն երկար էր , և մանաւանդ ուրախ ալ կը վերջանար . հետեւաբար ազդեցութիւնը անյայտացունելու պիտի ծառայէր ետեւէն եկած կատակերգութիւն մը : Կըլըսենք թէ կոկիկ գումար մ'ալ հասոյթ ունեցաւ ընկերութիւնը , որու 1/3ը կողմասահայ տառապալներուն յատկացուած է :

SUUS

Ե.Գ.Ի.Պ.Տ.Ա.Ն.Ա.Յ. Բ.Ր.ՈՆ.Ի.Կ

Դպրոցական գործերը տեղւոյս օրուայ ամենակարեւոր խնդիրները կը կազմեն : Երկրի մը մէջ , ուր արտաքին մրցումը և օտարներու զերազանցութիւնը հայ կը թական հիմնարկութիւնները յետին տեղ մը կը ձգեն , ուրախալի է հաստատել այս երևոյթները , որոնք այլպէս կարելի է անուանել « արտասահմանեան հայութեան արթնումը » :

Շատ տարիներ չէ , երբ դեռ հայկական ջարդերու հետեւանքով , զաղթական նորանոր տարրեր լեցուած չէին փարաւուններու հիմակուայ երկիրը , իր նուագութեան հակառակ զօրաւոր , բարձր և ազդեցիկ դերք գրաւող հայութիւնը , կորստեան վը հին դէմը հասած էր : Դեռ այսօր ալ այդ հնամեայ բնիկներն իրենց նախկին նշանները կը կրեն ու մեծագոյն մաս մը — վսեմաշուք , ազնուափայլ — իրենց մայրենի լեզուն կորսնցուցած , իրենց վարք , բարք ու կենցաղով գրեթէ օտարացած են :

Այսու ամենայնիւ հայ դպրոցը գոյութիւն ունէր և նոյն իսկ ատենին այս ամենը նախատեսող վանքի Գալըստեան , ընդարձակ կալուածներ տրամադրած էր տեղւոյս կը թական գործին ինչպատ : Բայց կը թուի թէ հայ դպրոցը չէր կրցած ժամանակի պահանջներուն գոհացում տալ և անոր համաձայն ծրագիր մը հիմնել , գործադրել . ահա՛ թէ ինչո՞ւ . մինչև այժմ ալ միջին և հարուստ դասակարգի հայութեան կարեւոր մասը նախապատել կը համարի իր զուակները օտար դպրոցները զրկել :

Նոր և մաքուր տարրերու գաղթականութիւնը դպրոցական խնդրին նոր ցնցում մը տուաւ և այսօր այդ շարժումին զերազանց հետեւանքը և ապացոյցը կը մնան Պողոս փաշա Նուպարի նոր դպրոցաց հիմնարկէքը և բարձրագոյն կը թուի ինչ տա.

լու յատկացեալ գումարի մը տրամագործիլը :

Մաղթենք որ գործը հոգ կանգ չառնէ , և ազգային դպրոցաց նիւթական շէնքին հետ և ներքին ծրագրերու բարեփոխութեամբ հնար ըլլալ ժամանակակից պահանջներու համաձայն աւելի բարձր և գործնական կը թուի ինչ մը հայթայթել աշակերտներուն , առանց զանոնք օտար հաստատութիւններուն կարօտ ձգելու :

Գահիրէի ազգային վարժարաններու մասին այս խորհրդածութիւնները գրած ատեն , անհնար է անտես անցնել նաեւ տարիէ մ'ի վեր միայն գոյութիւն ունեցող մի ուրիշ հայ կըլթական ձեռնարկի մը նկատմամբ , որու գոյութիւնը թէ՛ օգտակար է և թէ՛ սրտապնդիչ , և նոր ապացոյց մը կը մնայ հայ իգական սեռի ձեռներեցութեան և հաստատամտութեան : Խօսքս Գահիրէի Օր. Մանիսալեան քոյրերու , ազգանց ցերեկեայ և զիշերօթիկ , տեսական և գործնական վարժարանին համար է :

Պոլսոյ Մէզգուրեան վարժարանի ընթացաւարտներէն , տեղիս ազգային վարժարանի նախկին վարժուհի Օր. Սոֆի Մանիսալեան այսօր կըլթնայ պարծիլ որ հոս օտար երկրի մը և ազգայիններու անբացատրելի սառնանտարբերութեան մը մէջ և նոյն իսկ անիմաստ և անվայելուչ ընդդիմութիւններու հակառակ , իր կրտսեր քրոջ հետ միայնակ , յամառ կամքով մը յաղթելով բիւր դժուարութիւններու , կրցած են 70է աւելի աշակերտուհիներով յաջող վարժարան մը հիմնել : Եւ երբ հայ ընտանիքներէ բաւական մաս մը՝ ինչպէս ըսինք՝ իրենց զուակները օտար դպրոցներ կը զրկեն , ուրախալի է հաստատել որ հոս օտարներ ալ կը յաճախեն :

Գահիրէի մէջ ուր 5000է աւելի Հայեր կան , ազգական երկու կըլթական հաստատութիւններ բնականաբար շատ չեն : Եւ երբ Տիկին Մարի Պէյլէրեան և Օր. Թաշեհան ազգային վարժարաններու մէջ կը տքնին հայ իգական սեռի կըլթութեամբ , Մանիսալեան մասնաւոր վարժարանն ալ՝ որ ամենայն իրաւամբ առաջնոյն մէջ լրացուցիչ մասը կարելի է համարիլ՝ նոյնքան իրաւունք ունի հանրային ուշադրութեան , գնահատութեան և բարոյական ու նիւթական քաջալերութեան , որոցմով միայն հնար պիտի ըլլայ միայնակ ոյժերով գլուխ բերուած այս նոր հաստատութիւնը արժանաւոր կատարելութեան մը հասցնել :

Գահիրէ Թ.Պ.Ա.Կ.Ի.Յ

ՀԱՅԵՐ Ի ԹԻԻՐԲԻԱ

Հայ-հոռմէականները կ. — Պատրիարք Գեր. Պողոս Սապպաղեան որ Հազով գնացած էր , վերնեկի և վիէննաի Միթրարեանց վանքին ալ այցելելով վերադարձած է կ. Պոլսոյ : — Պետական ելմտական նախարարութիւնը , սովորականին համեմատ , այս տարի ալ Զատիկական տօներին առթով — 40,000 զրուշ նուէր զրկեց

մեր ազգային պատրիարքարանին , ինչպէս նաեւ 60,000 զրուշ Յոյների պատրիարքարանին և 20,000 զրուշ Հայ-հոռմէականների պատրիարքարանին , պուլկար էքզարքարանին և Հրեայների խախամարանին , որոնց Պատեքի տօնն այս տարի զուգարկեցաւ մեր զատկական տօներին : Սուլթանն ալ գատէն , իբրեւ անձնական նուէր մը , 25,000 զրուշ զրկեց է մեր պատրիարքարան , տօներին առթով աղքատներին բաշխուելու համար : Նոյն նպատակով զանազան գումարներ զրկեց է և վերոյիշեալ ազգային պաշտօնարաններին :

— Պատրիարքարանի գործակատարը քահանայի մը հետ մէկտեղ կեդրոնական բանտն երթալով , կարօտ հայ բանտարկեալներին նպաստներ բաշխած են զատկական տօներին առթով , սովորականին համեմատ :

— Զատիկական տօներին առթով , սովորական հանդիսաւոր այցելութիւններ փոխանակուած են Ամեն. Օրմանեան պատրիարքին և Յոյն. ըր ու Հայ-հոռմէականների պատրիարքներին , Պուլկարների էքզարքին , Ասորիների պատրիարքական կ. Պոլսի փոխանորդին , ինչպէս նաեւ եւրոպական դեսպաններին միջեւ : Իսկ թիւրք նախարարները սովորականին համեմատ իրենց այցաբարտներ մեր պատրիարքարան զրկելով շնորհաւորած են :

— Կարինի առաջնորդ Տ. Զաւէն Մ. Վ. Եղիանեան իր պաշտօնէ հրաժարական տուելու և կ. Պոլսի վերադառնալու թողտուութիւն ստանալով պատրիարքարանէն , մեկներ է կարինէն :

— Կիլիկիաի Ս. Կաթողիկոսը նաեւ մը գրելով կ. Պոլսի պատրիարքին , փափաք յայտներ է վերցունելու Հայրապետական աթոռներին միջեւ եղած խտրական ոգին , որ շնչուած էր հանգուցեալ Գեորգ կաթողիկոսին օրով . և այս առթով գրուած տեր է Ամենայն Հայոց այժմեան կաթողիկոսի թոյլատու և անխտրական ոգին , որ ինք վէհ. Տ. Մկրտիչ կաթողիկոս առանձին գրով ալ յայտնան է կիլիկիաի Ս. Կաթողիկոսին :

— Կ. Պոլսի Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը պայմանագրութիւն մը ստորագրեց Անգլիացի երկու հիւանդապահ կիլիկեալ բերելու համար , նոր շինուող հիւանդարանին մէջ ծառայելու պաշտօնով : Այդ Անգլիացի հիւանդապահները ձեռքին տակ պիտի պատրաստեն Հայ հիւանդապահ կիլիկեալ որոնց համար մասնաւոր դասախօսութիւն մը պիտի հաստատուի :

— Զմիռնէն գրած են « Ռազմիկ » թէ վերջին գէպերին պատճառաբանտարկուածներէն կարնեցի Մանչը իփէքեան , որ կը դատախօսէ Մանիսալեան վարժարանին մէջ , բանտին մէջ փորձեր է անձնապաշտ լինել թիթեղի կտորով մը իր վիզ կարելու բայց չէ յաջողել և վերաւորուած մանր վիճակի մէջ փոխադրուելու հիւանդանոց : Գրպանին մէջ նստած մը գտնուել է ուր այսպէս գրած էր

արանին, թոյների 00 զրույ թիարքա, քրանին և որոնց զուգարէ. աներին անձնա. զրկեր տներին սլուելու զանազան քոյիչեալ արծակա մկտեղ ով, կա նպատ. տներին անատ աթով, այցելու ն Ամն. և Յոնն. ի պատ. էրքար. քական կ. էս նաւ. միլեւ. սովորա. ցաքարա. զրկելով. Տ. Չաւն. անէ հրա. աս վերա. աստանով. ր է կա. կոսը նա. ատրիար. վերցուե. րին մի. որ շնչա. զ կաթն. վ գրուա. կան կա. ստորակ. րտիչ կա. յայտնա. ձուլիւն. աս ճիւն. յազրեր. աս ճիւն. յազրեր. յազրեր. յազրեր.

Թեան է ենթարկվել: Պ. Հալիկը իր ճառում ասաց, որ կազմակերպութեան անդամները ման են գալիս փախախտելով, կատարում են սպանութիւններ և ինչ. Այո՛, նրանք ման են գալիս փախախտելով: Նրանց տեսել են և Մալման, և Պ. Բառչը և ուրիշները: Բայց ի՞նչի համար էին նրանք ման գալիս: Նրանք ման էին գալիս ոչ թէ յարձակվելու, այլ պաշտպանելու: Դաշնակցութիւնը ցաւալի գէպերի պատճառը չէր կոչկառու, բայց երբ այդ գէպերը պայթեցին, ի՞նչ պէս կարելի էր արգելել նրան զուրս չը գալ ժողովրդի պաշտպանութեան համար: Եւ նա դուրս եկաւ իր գեղեցիկ (այո՛, ես այդ ստուժ եմ) Մաուզէրի հրացաններով: Անցան ամիսներ — և հայ ժողովուրդը. հարկադրված՝ վերցրեց իր վրա զօրքի դերը. գեղեցիկ զօրքի, և կուցեց ուսու զօրքերի կողքին: Մի ժամանակ այստեղ տարածեցին զգուշի զրպարտութիւն, թէ Դաշնակցութիւնը կամենում է յարձակվել և սպանել բոլոր ուսու օֆիցէրներին — և գտնվեցին մալդիկ, որոնք հաւատացին այդ զրպարտութեան: Այո՛, երկգլխեան արծիւը թաթախվեց արիւնով, բայց թաթախվեց իշխանութեան անարժան ներկայացուցչների յանցանքով, որոնք խայտառակուս են ուսու անունը:

էին մուսուլմանները, ինչո՞ւ մենք էլ չու. նենանք: Բայց մենք իսկապէս չենք ձգտում այդ տեսակ կազմակերպութեան: Մենք այստեղ չենք ցանկանում ոչ թուրքական, ոչ հայկական թագաւորութիւն ունենալ, այլ միայն ուսուական: Թող հայ կազմակերպութիւնները գնան թիւրքիս, մենք ինքներս կօգնենք նրանց այդ բանի մէջ, բայց թող մեզ հանգիստ թողնեն:

պատգամաւորներ ճառերի առթով, գտնուեց է, որ կազմակերպութիւնները ծագում են և մեռանում են ոչ մասնաւոր անձանց կազմով. դրա համար հարկաւոր է հող և մենք կօրհնենք այն րօպէն, երբ այլ եւս հող չի լինի այդ տեսակ կազմակերպութիւնների համար: (Շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք հետեւեալները.

Հ. Առաքելեանի Հանրամատչելի Միւսրոպեան գրադարանի Գրք հատոր. Մի ԱՄԻՍ ԱՐԵՒԻԷԼՔՈՒՄ. I. Տասն օր կ. Պոլսում. II. Տասն օր Պիրամիտների աշխարհում. III. Տասն օր Երուսաղէմում: Գրեց Հ. Առաքելեան: Թիֆլիս. Տպարան «Հէրմէս»: 1904. Սթածալ 249 երես:

(Տիար Հ. Առաքելեան 1893 թը. ւականին ուղեկից եղած էր նորընտիր կաթողիկոս Խորիմեան Հայրիկը Երուսաղէմէն Էջմիածին առաջնորդելու համար զրկուած հրաւիրակներին: Իր այդ ճանապարհորդութեան մէջ, թէ՛ կ. Պոլիս, թէ՛ Երզրատոս և թէ՛ Երուսաղէմ ունեցած տպաւորութիւնները նկարագրած է յս տետրակի մէջ սահուն և գրաւիչ ոճով մը որ առանց յոգնեցնելու, ընթերցողին հետաքրքրութիւնը կը շարժէ մինչեւ վերջը կարգալու: Անոր մէջ կան տեղազրական, կենսագրական, պատմական և զանազան սովորոյթների վերաբերեալ հետաքրքրաշարժ սեղեկութիւններ: Հայկական խնդիրն ալ բնականապէս իր տեղ գտած է այդ գրքի մէջ քանի որ ճանապարհորդը կ. Պոլիս գնացած էր 1893 թը. ւականին, որ այդ խնդրի առթով կ. Պոլսի Հայերի յուզուած միջոցներէ մին կը ներկայացունէ: Հայաստանի բարենորոգումներին նկատմամբ Նուպար փաշաի ծրագրի և 1880ին եւրոպական մեծ տէրութիւնների կողմէն Բ. Դրան զրկուած ծանուցագրի թարգմանութիւններն ալ զետեղուած են այս գրքի մէջ: Գինը 40 կոպէկ է: Ստանալու համար դիմել հեղինակին թիֆլիս, «Մշակչի խմբագրութեան միջոցով և կամ Rue Consulskaia, No. 15 »)

ՍԱՐՍՈՒՆՆԵՐ. Քնարական բանաստեղծութիւններ. Երգեց Վարուճ ժան Դաւիթի: Վենետիկ Ս. Ղազար 1906: (Չգայնիկ սրտէ և բեղնաւոր բրեւակայութեան բխած ոտանաւոր բանաստեղծութիւնների հաւաքածոյ մ'է որ Մ'ուրատ-Ռափայէեան վարժարանի նախկին աշակերտներէ մին գրած և երախտագիտութեամբ ձուանած է այդ վարժարանի հիմնադիր բարերարներին) Գինն է 1 Ֆրանգ վենետիկի մէջ:

Հրատարակուելու համար ՂԸԼ կուած մեզ հետեւեալ ազգը.

Տիար Ղեւոնդ Եպիսկոպոս Երշմանեան. — ԻՄ ԱՐՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ, Հաւնդերձ Տաւնօրոքեալ: Ս. Տեղեաց: Լըրագրական կանխահաս նկատողու.

ՀԱՅԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Վաղարշապատի հայ ազդիկներն իննց մէջ խնայած երկու հարիւր քաւի գումարով և շատ մը գիրքերով հիմներ են Գրադարան-ընթերցարան մը, այրերին և կիներին զիւրաթիւն ընծայելու նպատակով որ կիրառէ կարգան բարոյական, ընտանեկան և գրական հրատարակութիւններ: Վաղարշապատի թեմին կապան հոգաբարձուները պիտի մասնակարարեն այս նոր հաստատութեան նիւթական մասը:

«Արշալոյս»ի մէջ կը կարդանք հետեւեալը. «Թիֆլիզում գոյութիւն ունեցող յեղափոխական կազմակերպութիւնները քանիցս յայտարարել էին, որ իրանք բռնի ուժով երբէք փոք չեն պահանջում կամ հանգանա. կութիւն չեն անում: Այդ բանը հարկաւոր է նկատի առնել, որովհետեւ վերինը զանազան կառկածներ անձնաւորութիւններ, օգտուելով զանազան յեղափոխական անուններէ, արհեստ են դարձրել մասնաւոր անձնքի փոխ կորզելու:»

Ականջը խօսի՛ արտասահման գըտ. նուր վեր. Հնչական գործիչներին, որոնք կատարած մեզ գէմ, ամեն տեսակ սուտ լուրեր կը տարածեն մեզ նկատմամբ իրենց կիսապաշտօնական բերանների, «Չայն Հայրենեաց»ի, «Ազատ Բեմախի և «Իրաւունք»ի միջոցով որովհետեւ հարուստներէն գրամ կորզելու համար սպանա. կան նամակներ զրկելու իրենց գործակերպչին դէմ խօսած ու գրած էինք:

Իր աղօթքների մէջ հասարակ հայ ժողովուրդը գիտում է Աստուծոն, հայցելով «թող ուսու թագաւորի սուրը հատու լինի». իսկ այդպիսի ժողովուրդը չի գնայ առուական տիրապետութեան և ուսու ժողովրդի դէմ: Դաշնակցութիւնը, Պ. Հալիկը իր թուրը կը դնի երախտակալի մէջ, բայց ինչ դնի միայն այն ժամանակ, երբ նա այլ եւս պէտք չի ունենայ պաշտպանել ժողովուրդը: Ա՛յլ է ձեզ ասել, որ հայերը դժգոհ են Դաշնակցութիւնից: Յիշեցէք, որ Դաշնակցութիւնը չար մտքեր չունի ոչ հայերի, ոչ թուրքերի դէմ. նա ամենեւին չէ կամենում վնասել թուրքերին: Մեզ վրա բարդում են բազմաթիւ զրպարտութիւններ, բայց մի՛ հաւատաք նրանց: Մենք չենք ուզում ոչ աւտօծմիս, ոչ սէրիտօրիայի բաժանումն. մենք չենք ուզում բաժանվել թուրքերից, մենք կամենում ենք լայն տեղական ինքնավարութիւն ֆիդէրատիվ հիմունքներով, ձեռք թուրքերից հետ միասին. մեր ցանկութիւնն է — անբաժան կովկասը, անբաժան և ազատ Ռուսաստանի մէջ:»

Այս ճառի տպաւորութիւնը այնքան գորեղ էր, որ մուսուլման պատգամաւորները հարկ համարեցին վկայել դրա մասին իրանց ճառի մէջ:

Բժ. Կարաբեկով գտնում է, որ կազմակերպութեան նպատակները կարող են վնաս լինել, երբ նա հետամուտ է իրադրոյթներին: Բայց կազմակերպութիւնը կարող է շեղվել իսկական շաւղից: Եթէ մուսուլմաններին ծանօթացրած լինէին Դաշնակցութեան իսկական նպատակների հետ, դուցէ վերաբերմունքը դէպի նրան այլ լինէր: Բայց վերջին տարիները մուսուլմանները տեսնում էին, որ Դաշնակցութիւնը հետամուտ է նեղազգայնական նպատակների, եթէ ոչ հակամարտկային: Կուսակցութիւնը չը կարողացաւ ներշնչել մուսուլմաններին, թէ նա կուտում է ամենքի համար. մուսուլմանները, այսինքն հասարակ ժողովուրդը կարծում է, որ կուսակցութեան նըպատակն է — ջնջել մուսուլմանութիւնը. նրանք կամենում են, որ Դաշնակցութիւնը մտնուի է օգտվել Ռուսաստանի դժուար կացութեամբ, որ ազատ վէ ուսուական տիրապետութիւնից: Որքան այդ ճիշտ է — դա ուրիշ հարց է, բայց մուսուլմանութիւնը այդպէս էր մտածում և այդ հողի վրա ծագեց թըր նամութիւնը: Մի քանի անգամ որ հայերը ունեն կազմակերպութիւն, մտածում

ՀԱՅ-ԹԻՒՐԿԱԿԱՆ ՀԱՄԱՍՈՂՈՎՈՐ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ Գ. Նիստ (Շրկկ.) (Շարունակութիւն 27րդ քաւն)

Ա. Սատիսեան (Շարունակելով խօսում է) — Ռուսաց իշխանութիւնը մոլորեցրելով մեզ Դաշնակցութեան նպատակների վերաբերմամբ. սա, իսկապէս, նոյն նպատակներին էր հետամուտ, որին հետամուտ էր և իշխանութիւնը: Իշխանութիւնը կովկասում, մինչեւ կոմս Վորոնցով Դաշնակցութեանը, ամեն կերպ հալածում էր Դաշնակցութեանը: Ասում են որ Դաշնակցութիւնը արիւն է թափում: Այո՛, բայց նա թափում էր այդ արիւնը յանուն մեծ գաղափարի, ինչպէս թափում էին և ուսու մարդիկ: Այստեղ, ինչպէս այդ դաշնակցութեամբ, մի քանի տարի առաջ ուսուական իշխանութեան բարձր ներկայացուցիչը կովկասում արտասանեց այս ճակատագրական խօսքը. «Հայ սեւ զարպարտիկ»: Բայց այդ խօսքը արտասանողի անունը արդէն դատապարտու.

Թիւններու հետեւանօք՝ շատ մը ազգայիններու կողմէ եղած թախանձանաց առջեւ տեղի տալով, անցեալ փետրուար ամսուն մէջ սկսուած է հրատարակութիւնը հանգուցեալ Տէր Ղեւոնդ եպիսկոպոս Շիշմանեանի վերոյիշեալ երկասիրութեան, որ 55էն 60 պրակի կրնայ հասնիլ. որոնց հինգ պրակները արդէն հրատարակ ելած են:

Հանգուցեալ Գերապատիւ Հեղինակին զբաւոյր յայտնած հաւանութեամբ, ներկայ հրատարակութեան զուտ հասոյթէն, կարեւոր մաս մը բարեգործական նպատակներու պիտի յատկացուի. այդ պատճառաւ յատկապէս (500) հինգ հարիւր օրինակ կը պատրաստուի, անոնց վաճառման արդիւնքը՝ 20,000 զրչ. ողջ՝ առ այդ նպատակ գործածուելու համար:

Արդի պահանջմանց բերմամբ՝ փառքելի է որ այդ գումարէն օգտուին կովկասի արկածեալները, Գահիրէի Հայկ. Բար. Միութիւնը և Թիւրքիոյ այլ և այլ տեղերու բանտերուն մէջ հեծեծող դժբաղդ բանտարկեալները՝ որոց դառն կացութեան անձին փորձով ծանօթացած է Սրբազան հեղինակը: Այս նուէրին գործադրութեան և պրակներու ժամ առաջ սպառման ջանալու համար այժմէն պէտք է բանակցիլ Մասնախմբի քարտուղար Տ. Եղիշէ Թորոսեանի հետ:

Կանխիկ բաժանորդագրութիւնը Եղիպտոսի համար 40 զրչ. ողջ է, իսկ արտասահմանի համար 12½ Քրանց: Իւրաքանչիւր պրակ 1 զրչ. ողջ կարժէ:

«Աքսորի կեանք»ին վերաբերեալ ամեն կարգի թղթակցութիւն, դրամ և այլն, հարկ է ուղղել Մասնախմբի Հաշուակալ-Քարտուղարի հասցէին՝ որ է Mr. E. Torossian, Le Caire (Egypte).

Գահիրէ, 10 Մարտ 1906

Կարգադիր Մասնախմբ

Ծանօթ. Ամերիկայի, Պուլկարիոյ, և կովկասի համար վստահելի գործաւ կաններու պէտքը կայ. Դիմել վերոգրեալ հասցէին:

ԹԻՒՐԿԻԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Տիգրանակերտի կուսակալ Աթապէյ կարինի կուսակալ Նշանակուած է և կարինի կուսակալ Նազըմ փաշան՝ Տիգրանակերտի կուսակալ Սակայն այս վերջինը դեռ իր նոր պաշտօնատեղ չհասած, Գասթէմուրի կուսակալ Նշանակուած է:

— Պարսկաստանի մաքսային վերադասուող Մ. Նաուս որ կ. Պուլիս եկած էր առեւտրական դաշնագրի մը կնքուելուն համար, իր պաշտօն կատարած լինելով վերադարձաւ Թէհրան:

— Ելեւմտական նախարարութիւնը Հանրային Պարտքի վարչութեան 100,000 օսմանեան ոսկիի կանխավճար մը ստացաւ: Այդ գումարի վրայ աւելցուելով գաւառներէն ստացուած 40,000 ոսկիի գումար մ'ալ, մէկ ամսական վճարուեցաւ տէրութեան պաշտօնեայիններին:

— Դեսպաններն անցած հինգշաբթի օր ժողով մ'ընելով որոշեցին որ, իրենց կառավարութիւններէ թող տուութիւն ստանալէ յետոյ, Բ. Դըրան ծանուցագիր մը ներկայացունեն որով ընդունին մաքսատուքերին վճարայ 3% յաւելումի սկզբունքը, բայց միեւնոյն ժամանակ ապահովութիւններ պահանջեն որ ատկէ եղած հասոյթի յաւելումը Մակեդոնիան պիտի յատկացուի:

ԹԻՒՐԿԻԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պուլիս կը հաղորդեն մայիս 2ին թէ Բ. Դըրան պարսկական դեսպանին ծանուցագիր մը յանձնեց որով կը հաստատէ երկու միւսիման ազգերին միջեւ վէճը հանդարտեցնելու նըպատակով հաշտարար առաջարկները. պարսկական դեսպանը դո՛հ կերելի: Կը կարծուի որ պարսիկ կառավարութիւնը պիտի ընդունի խնդրին այս կերպով լուծումը:

ԱՆԳԼԵՒԹԻՒՐԿԱԿԱՆ ՎԷՃԸ

Անգլիական «Մինէրվա» մարտա նաւի Ուէյմսթ հրամատարն որ վերադարձած է Էլ-Արիշէն, կը հաստատէ թէ Բիֆֆի սահմանագծութեան ձողերը վերուցած էին Թիւրքերը: Թիւրք կառավարութիւնը հրաման զրկեր է Երուսաղէմի կառավարչին որ քննութիւն մը կատարէ այդ մասին և յանցաւորներն ո'րոնք ալ լինին, պատժուին, և սահմանազուխը Նշանակող ձողերը նորէն իրենց տեղերը դրուին:

— Կ. Պուլիս Ֆրանսական և ռուսական դեսպաններն Եղիպտոսի սահմանագիծի խնդրին նկատմամբ Անգլիայի պահանջներին ոյժ տուած են, անոր աջակցելով: Գերմանական կառավարութիւնը յայտնեց է Անգլիան թէ ինք իմացուցած է Սուլթանին որ և գիպտական խնդրին մէջ իրմէ աջակցութիւն մը պէտք չէ յուսայ և խորհուրդ տուած է որ բարեկամաբար լուծում մը տայ այդ վէճին:

— Անգլիական դեսպանը մայիս 3ին Բ. Դըրան վերջնագիր մը ներկայացուց որով կտրուկ կերպով կը պահանջէ որ Թիւրք զօրքերը քաշուին եղիպտական հողէն. Տաս օր պայմանաժամ տրուած է. եթէ այդ միջոցին խաղաղութեամբ չլուծուի խընդիրը, զինուորական ուժով պիտի լուծուի:

Միջերկրական անգլիական ամբողջ նաւատորմի յանկարծ հրաման ստացաւ ճանաչել իրենց նի չէ դեռ թէ ս'ըր պէտք է երթայ իջարտանաւերէն մի խումբ Բիբէի առջեւ գնացած ժողովուած են. յետոյ անոնցմէ մի քանին անկէ ալ ճանաչելու են զէպի անձանց թեղ մը:

Անգլիան հետզհետէ նոր զօրագունքեր կը զրկէ Եգիպտոս:

— Կ. Պուլիս հեռագրած են «Բըրդի Ժուրնալ»ին թէ նախարարական խորհուրդը գումարուելով մայիս 5ին, նկատի առաւ Անգլիայի վերջնագիրը:

Կըսուի թէ այդ նստէ վերջ, սուլթանն որոշեց է համաձայնիլ Անգլիայի պահանջներին և թէ հրամաններ պիտի զրկուին որ Թիւրք զօրքերն անմիջապէս յետ քաշուին Գապահէն:

ԱՆԳԼԻԱԻ ԹԱԳԱՒՈՐՆ Ի ՖՐԱՆՍԱ

Անգլիայի Լուուարտ թագաւորն որ իր ճանապարհորդութենէ կը վերադառնայ Լոնտոն, մայիս 2ին հասաւ Բարիդ, Հետեւեալ երեկոյ, նախագահ Ֆալիէր ճաշկերոյթ մը տուաւ իրեն Էլիզաբէթ պալատին մէջ որ թագաւորն ու նախագահը շատ սիրալիր բաժակաճառեր խօսեցան: Երկուշաբթի օր մեկնեցաւ Բարիզէն զէպի Լոնտոն:

Գերմանական լրագիրները զանազան մեկնութիւններ կուտան Լուուարտ Էլին 5 օր Բարիզ անցունելուն:

ՌՈՒՍԻԱ

Կոմս Վիդզէ իր տկարութիւն և յոգնածութիւն պատճառելով հրաժարական տուաւ նախարարապետութեան պաշտօնէն: Յարն ու քաղով մը մեծագէտ գնահատելով անոր աշխատանքները, ընդունեց հրաժարականը և անոր յաջորդ նշանակեց Տ. Կորէմքինը: Կոմս Վիդզէ պետական խորհրդի անդամ կը մնայ:

Ներքին գործերի նախարար Տուրնիօի հրաժարականն ալ ընդունուած է:

— Վալը, մայիս 10 (Ն. Տ. ապրիլ 27), Յարն իր ներկայութեամբ Չմբ. լային պալատին մէջ հանդիսաւոր կերպով պիտի բանայ պետական Տու. մաի (Երեսմիութեան ժողով) և պետական խորհրդի նիստերը: Այս վերջինն այսուհետեւ Ծերակուտական ժողովի մը պաշտօնը կունենայ:

— Հանդարտութիւնը բոլորովին տիրած չէ դեռ. այս կամ այնտեղ մասնակի յուզումներ կամ պայթուցիկ ուժերով սպանութիւններ անպակաս են: Մայիս 6ին ռուս նետեցին Մոսկուայի ընդհանուր կառավարիչ ժողովակալ Տուպաօֆի վրայ որ ոտքէն վիրաւորուեցաւ և իր հետեւորդներէ 2 հոգի սպանուեցան: Նոյն օր Եկաղէրինոսուաի ընդհանուր կառավարիչը ըզվովէրով սպանուեցաւ փողոցին մէջ: Երէկ ալ Քիէվի մէջ սպանուած է իկնաթիէվ կոմսը և այլն:

ՌՈՒՍ ԹԵՂԱՓՈՒԱԿԱՆՆԵՐ ԲԱՐՔԻ ՄԷՋ

Անցած հինգշաբթի օր երկու ռուս ուսանողներ վէնսանի անտառին մէջ, իրենց ռուսեր պայթելով, վիրաւորուեցան ծանրապէս: Անցորդներ և ոստիկաններ վրայ հասան և զիրենք փոխադրեցին հիւանդանոց: Մին, Սըրիկա, կէս ժամ յետոյ մեռաւ. միւսը, Սոքոլով, յոյս կայ թէ կազատուի: Հարցաքննութենէն հասկըցուեց թէ դաւադրութիւն մը կայ եղբը վրասիմիր մեծ դուքսը և ուրիշներ սպաննելու: Շատ մը ռուսեր ձերբակալուեցան Բարիզի մէջ:

ՍՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Աթէնքի մէջ ապրիլ 23ին հանդիսաւորապէս սկսան ոլիմպական խաղերը, գահաժառանգ կոստանդին իշխանի ճառախօսութեամբը: Երկրորդ թագաւորն որ ներկայ կը գտնուէր, խաղահանգէսը բացուած հրատարակեց: Յունական և օտարազգի ըմբշամարտական ընկերութիւնները կարգով անցան հանդիսական բեմին առջեւէն: Անգլիայի Լուուարտ թագաւորն ալ այն միջոցին Աթէնք գտնուելով, հանդէսին ներկայ եղած էր: Անթիւ բազմութիւն խանուած էր:

— Միլանի ցուցահանգէսը ապրիլ 28ի շաբաթ օր հանդիսաւորապէս բացուեցաւ, իտալիոյ թագաւորին թագուհին ներկայութեամբ:

— Համամերիկեան երրորդ համաժողովը յուլիս 20ին պիտի բացուի Բիօ Չանէթի մէջ (Պրէզիդ) և պիտի վերջանայ սեպտեմբերի 1ին:

ՄԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

SETH. J. MESROVP. History of the Armenians in India (From the earliest times of the present day). 5 fr.

Տիար Խ Մամասեան պատիւ ունի ծանուցանելու արգոյ հասարակութեան որ 2 տարիէ ի վեր ունեցած փորձառութեամբը մեծ զիւրուութիւններ կարող է տալ ճանաչողներու գործին թէ՛ Ամերիկայի համար և թէ՛ այլուր: Ունեցած 2 պանդոկներու մաքրութիւնը և ամանութիւնը ճանաչողներու հանգստաւէտութեան համար գրաւական մ'են:

Khatchadour Mamasian & Co. 17 & 19 Suffolk str.

(England) Liverpool

ՄԻՋՐԱՆ Գ. ՓՕՓՐԱՀԱՆԵԱՆ

Գործարանատեր եկիպտական եւ բիւրքական գերբնութի սիկաբուցիէրի եւ կըտրուած ծխախոտի.

ՆԱՆԻ ՆԵՐԱՄՈՂ

Թիւրքական ընտիր ծխախոտի տեսեսերի.

Téléphon 5116 Madison Sq.

Հասցէ՝ M. G. Toprahanian

334 Fourth Ave.

(E. U. d'Amérique) New York

ՏԵՕՐԵՆ-ԻՄՔԱԿԻ

Պ. ՓՕՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ՄԱՐՇԵՅԼ

Հայերէն տպարան Պ. Փոքրոզպիւտեան Le Gérant: François CARRIERE Marseille. — Imprimerie du Midi